

մունքը, այլ պէտք է գործել լօգուտ մարդկութեան և վերջի ի վերջու միմիան դրանումն է գտնում մարդկալին կեանքի նպաստակը.

Ահա այս տեսակէտից մենք ցանկալի համարեցինք, որ թարխուղարեանը թարգմանէ նաև ֆառատի Ա մասը. գուցէ Ա մասի թարգմանութիւնն աւելի մեծ դժուարութիւնների հանդիպի, սակայն այնուամենալիւ մենք լուսով ենք, որ մեր ալեղարդ բանաստեղծն ալդ դժուարութիւններին էլ կաղը. թէ և հայ նորագոյն գրականութեան պատմութեան մէջ անմոռաց անուն կթողնէ՝ իբրև ամբողջ ֆառատի առաջին թարգմանիչ.

Թող ապազալ հայ սերունդն աւելի տաղանդաւոր թարգ. մանիչներ տալ:

«Ֆառատը» տպագրուած է մեծ խնամքով, առանց վրիսպակի և ընտիր թղթի վրայ. շապակի գեղարուեստական նկարը պատրաստել է լատուի նկարիչ Շամշինեանը, իսկ գրքի տպագրութեան ծախքերը հոգացել է պ. Ա. Բարեանը, որ չնորհակալութեան արժանի է. Գրքի գինը նշանակուած է 2 մանկթ, որ ինքն բատ ինքեան թանկ չէ, բայց մեր գիրք գնող դասակարգի համար շատ է. աւելի լարմար կլինէր կրկնակի թուով տըպագրել և գրքի գինը 1 մթ. նշանակել,

Թող գրական ճաշակ ունեցող հայ Ընթերցողն իւր սեղանի զարդը համարէ ֆառատը:

ԲԲԽԶ

Le Droit Arménien depuis l'origine jusqu'à nos jours par K.—J. Basmadjian, Macon 1901—. Հայկական իրաւունք—սկզբից մինչեւ մեր օրերը Կ. Բասմաննեանի, տպուած Մակոնում 1901 թ.։

Փարիզում հրատարակուող «Բանասէր» տմսագրի պ. իմբագրից նորերս ստացանք վերոգրեալ վերնագիր կրող իւր կազմած փոքրիկ գրքուկը (երօնութե) կամ աւելի լաւ՝ փոքրիկ տեսքակը, որ բազկացած է ընդամենը 7—8 քառածալ երեսներից.

Այս «տեսքակը» բովանդակում է իւր մէջ այն համառատ քանախօսութիւնը (տέτοւթե), որ «Փարիզի Ասիական ընկերութեան անդամ պ. Բասմաննեանը 1901 ին ներկայացրել է

Ֆրանսիալի մալրաքաղաքում տեղի ունեցած Համեմատական Պատմական Միջազգային ժողովին և որ ապա Միջազգային Պատմութեան Տարեգրութիւններ կոչուած հրատարակութիւնից քաղելով՝ լուս է հանել առանձին զըրքովկով։

Պ. Բասմաճեանի ալս աշխատութիւնը, որ—ինչպէս ինքն էլ ասում է—մի անախագիծ» է (esquise) առանց «մանրամասնութիւնների», մի տեսակ անուանական հաւաքումն է պատմական կարճառօտ բովանդակութեամբ ան անձանց, անցքերի, գրութիւնների ու գրքերի, որոնց տուած նիւթը վերաբերում է «Հալկական իրաւունքի» պատմութեանը սկզբից մինչև մեր օրերը ժամանակադրական կարգով։

Ասելով որ «Հալկական իրաւունքը» ուսումնասիրելու համար՝ զբախտաբար սակաւ են մնալ տեղեկութիւններ տուող միջոցներ և որ արեւելեան ազգերի կեանքով զբազուող եւրոպական դիտնականները ևս ոչինչ չեն գրել Հալաստանի «Հախոնական իրաւունքի» մասին »՝ «Բանասէրից» պ. Խմբագիրը լիշում է սակալն ալն մի քանի եւրոպացիններին (բաց ոչ բոլորին), որոնց սակաւաթիւ ուսումնասիրութիւնները լալտնի են արդէն հայ բանասիրութեանը՝ որպէս հալկական իրաւոգիտնեան ճիշդին վերաբերեալ զրուածներ առհասարակ։

Պ. Բասմաճեանի ալս «տետրակի» մէջ «Հալկական իրաւունքի» պատմութեան նոր և հասաքրքիր կէտը մեր կարծիքով նորա հետեւեալ տողերն են»

«Հալկական օրէնսդրութեան մասին մեր ունեցած ամեն՝ « նահին վկալութիւնները ալն արմնական սեպաձև արձանաւ՝ « գրութիւններն են, որ փորազրուած են Խ դարում Քրիստոսից առաջ. Ալս արձանազրութիւններից մենք լիմանում « ենք պարզապէս, որ Թագաւորները հրամաններ էին աալիս « և զոհաբերութեան կարգ էին սահմանում, որ Ասորա-Բառելացւոց պէտք չարազործներին կրակի՝ ու ջրի մէջ էին ձը- « գում և ալին» (տես եր. 4, լիշեալ տետրակի)։

Ինչպէս երեւում է «տետրակի» հեղինակը իւր ալս «նախագիծ» աշխատութեամբ չը պիտի սահմանափակէ «Հալկական»

^{*)} Նոյն թախանձաւանդիմանական խօսքն է ասում աւելի մանրամասնաբար Հ. Վ. Բասմաճեանը «Միջթար Գող շի» գատաստանագրքի իւր լառաջարանում եր. 6, Վաղարշապատ 188 թ։

իրաւոնքի» և առհասարակ հալոց օրէնտդրութեան իւր ուսումնասիրութիւնը, որով մասամբ իրագործած լինելով արժանալիշատակ իրաւագէտ Հ. Վահան Վ. Բաստամեանի նոյն ուսումնասիրութեան մասին ընդհանրապէս վաղուց արտալարտած իղձը ևս՝ կարող է ծառալութիւն մատուցած լինել ապագալում մեր աղջալին զրականութեան իրաւաբանական տակաւին աղջատիկ ճիւղին, ևւ ալս մի դժուար բան չը պիտի լինի պ. Բասմանեանի համար, քանի որ ինքը՝ ինչպէս տեսանք, ցանկութիւն ունենալով ուսումնասիրել իշեալ ճիւղը՝ բնակում է մանաւանդ Փարիզի նման համաշխարհային գիտնական մի կենտրոնում, ուր միշտ առիթ և նոյն առարկալին վերաբերեալ նիւթի առատութիւն կարող է ունենալ:

Վերջացնելով ալս երկտողս պ. Բասմանեանի «Հայկական իրաւոնք» դրքովի մասին՝ չը մոռանամ ասել միայն, որ հալոց իրաւաբանական աղջիւրներ մշակելիս՝ եւրոպական գիտնականների ուսումնասիրութեանց, քննադատութեանց և հակացքների հետ միասին զուգահեռաբար, պէտք է աշքի առջև ունենալ անպատճառ նոյնպէս և ամբողջ հայ գրականութեան մէջ երևած թէ ձեռազիր և թէ առաւելապէս տպուած ան հին ու նոր գրութիւնները, լողուածները, դրքուկները և ալյն, որ անմիջական վերաբերութիւն կարող են ունենալ առաջադրեալ ուսումնասիրելու առարկալին և որոնցից կ'օգտուի անշուշտ ուշիմ ուսումնասիրողը:

Ն. ՅԱՐԱՑ

Մինաս Բերբերենան. «Մքատ Շահ-Ազհազ» (Էտիլ).
Նուէր պ. Ս. Շ.-Ա.-ի 35 ամեայ յօքելեանին. էջ 35:

Երիտասարդ քննադատ բանասէր պ. Մ. Բերբերեանը, որ մի ժամանակ եռանդով գործում էր սր. Եջմիածնի ճեմարանում և Տփխիսում (կարճ միջոց), բարեբազզաբար ուրիշ շատերի պէս՝ չանալտացաւ հայ գրական ասպարէղից և երաքեմունքների հանդէս է զախս մեր պարբերական մասնւլի և գրական ժողովածուների մէջ՝ իւր գրական ակնարկներով, նոյնպէս և լուրջ քննադատական ուսումնասիրութիւններով:

«Մքատ Շահ-Ազհազ» ուսումնասիրութիւնը մի փոքրիկ